ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2015թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐՎԱՆԴ ԴԱՎԹԻ ԵՐԶՆԿՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2797-րդ տարեդարձի առթիվ, ստեղծագործական ակնառու հաջողությունների, Երևան քաղաքի երաժշտաարվեստում ներդրած նշանակալի ավանդի և բազմամյա վաստակի համար կոմպոզիտոր, դիրիժոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ, Հայաստանի հանրային ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր և գեղարվեստական ղեկավար Երվանդ Դավթի Երզնկյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐՎԱՆԴ ԴԱՎԹԻ ԵՐԶՆԿՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երվանդ Դավթի Երզնկյանը ծնվել է 1947թ. հունիսի 19-ին, Երևանում:

1965 թվականին ավարտել է Երևանի Նելսոն Ստեփանյանի անվան թիվ 71 միջնակարգ դպրոցը: Զուգահեռ ստացել է երաժշտական կրթություն Երևանի Սայաթ–Նովայի անվան երաժշտական դպրոցում:

1974 թվականին ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբերնետիկայի ֆակուլտետը: Ուսանողական տարիներին զբաղվել է երաժշտությամբ, նվագել բաս-կիթառ՝ ինստիտուտի «Երազողներ» վոկալ–գործիքային նվագախմբում և 1967 թվականից՝ «Պատանեկություն» համույթում:

1969-1972թթ. նվագել է ջազ քառյակում, որի շրջանակներում 1970 թվականին Կույբիշև քաղաքում նշված քառյակի կազմում հռչակվել է համամիութենական փառատոնի դափնեկիր:

1972 թվականից նվագել է Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի Պետական կոմիտեի էստրադային-սիմֆոնիկ նվագախմբում, 1986 թվականից՝ գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորն է:

1974-1975թթ. ծառայել է Սովետական բանակում, այնուհետև շարունակել աշխատանքը նվագախմբում:

1978-1983թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական բաժնում:

1984 թվականից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է, 1997 թվականից՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի էստրադային–ջազային երաժշտության ամբիոնի վարիչ, 2002 թվականից՝ Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ, 2009 թվականից՝ «Հայ հեղինակ» ՀԿ–ի խորհրդի նախագահը:

Հեղինակ է մի շարք սիմֆոնիկ, կամերային և էստրադային ստեղծագործությունների, մի շարք ֆիլմերի և թատերական բեմադրությունների երաժշտությունների, բազմաթիվ կոմպոզիտորական մրցույթների դափնեկիր:

2003 թվականին «Սայաթ–Նովա» երգի մրցույթում արժանացել է գլխավոր մրցանակին, 2006 թվականին՝ Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի, 2015 թվականին՝ ՀՀ ժողովրդական արտիստի կոչումների:

Ելնելով վերգրյալից և հաշվի առնելով Երվանդ Երզնկյանի ստեղծագործական գործունեությունը, բազմամյա վաստակը և երաժշտաարվեստում ներդրած նշանակալի ավանդը՝ առաջարկվում է Երվանդ Դավթի Երզնկյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐՎԱՆԴ ԴԱՎԹԻ ԵՐԶՆԿՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երվանդ Դավթի Երզնկյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐՎԱՆԴ ԴԱՎԹԻ ԵՐԶՆԿՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երվանդ Դավթի Երզնկյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ